

**Ս**հաւասիկ գարձեալ նոր տարի, Երկանց և աղետից նշանաւոր տարի մը անցուցինք, բազմապիսի արտաքին մշասիւք և անձկութեամբ նեղեալ. սակայն կարծենք այս ինչ մեծապէս ուրախալի է, որ ըստ բաւականի ժիր և գործն կենաց մէջ գտնուելով բարոյապէս, մինչդեռ մենք՝ ի խնամն և՝ ի դարման մեր կարօսութեանց ու արկածից սաստիկ զբաղած ենք, տարիները շուտ շուտ կը սահին, մանաւանդ թէ ժամանակն կը պակսի կը սպառի մեր անբաւ ըղձիցն ու թեածմանցն առնւ: Խորհրդածենք և քաջալերուինք իբրև Ազգ մեր ողեկան բարեկենդանութեան վրայ, ոչ միայն ընդարմացեալ վիճակի մէջ չըլլաւնուս համար, այլ և աւելի քան զյափաւորն մեր օրինաւոր զգացմանց մէջ արթնութիւն, աշխոյժ և ըստ այնմնակ գործունելութիւն ունենալուս:

Անցեալ տարւոյն սկիզբը քանի մը խօսք ընելով՝ ՚ի մուտո նորոյ տարւոյ ըսկինք թէ մեր նշանաբանը պէտք է ըլլայ գլխաւորապէս ինաստուուն գործունենութիւն, որուն հետեանքն է սերա և միահոգի ըլլալ, ճշմարիտ իմաստութիւն և շահ համարելով զհասարակաց բարին, որ է հիմն ընկերութեան, ոչ միայն ըստ կրօնական օրինաց, այլ և ըստ փորձոյ ամենայն ժամանակի մարդկութեան: Հիմա ալ ուրախութեամբ կը կրկնենք թէ զնայնը զարմանակի կերպով մը ճշմարտեալ տեսանք, - ՚ի բաց առեալ քանի մը մնանական դիտելիք կէտեր զոր յետոյ կը համարձակինք ակնարկել - գրեթէ բովանդակ 1876 տարւոյն շրջանին մէջ, որ նախընթաց տարեաց բարիք արդիւնաւորով տնկագործութեանց վրայ ընձիւղեալ՝ աճեցաւ ծաղկալից, և անցուշտ պատրճառտեց բարձմաղդի պտուղներ ներկայ և յաջորդ տարեաց համար. մանաւանդ ազգային ընկերական և ընտանեկան բարեկեցութեան վիճակը լաւցընելու նկատմամբ աւելի ևս զգալով և մեծապէս զգացընելով՝ որո՞ց և ուր պէտք է, ցրուեալ և պանդուխտ հայութեան գաւառաց և այլ և այլ ներքին կողմանց մէջ ունեցած հանգամանքն ու պէտքը: Որուն համար չնորհակալութիւն ՚ի խորոց սրտէ գործողաց և գլխաւորաց գործոյն:

Հիմա մենք՝ մեր ազգութեան ներկայ վիճակին մէջ կը նմանինք, ինչպէս ոչինչ ընդհատ նաև այլ ամենայն աղգք, Երկրաբան և մետաղագէտ գործավար-

ներու, կամ հնախոյզ և գետնավոր հմտասէլիներու, որք քանի մը փորձով իրենց աշխատութիւնքը լիուլի պսակեալ տեսնելով՝ կը խրախուսուին առաւելադունից, և հողյն խաւարային ընդերաց մէջ կը կարդան շատ ծածկեալ գանձեր, և զայնս 'ի լոյս վերաբերելու կը թէ և ակոխին: Անցելոյն միսիթարական յիշատակը և ապա-գային բեղնաւոր արգանդը լի ակնկալութեամբ պէտք է վառէ զմեղ մոռնալու յամենայնի զդժուարութիւն, և ամենայն ժայռ կտրելու անցնելու, գիտնալով այն յորձաքար երակներէն՝ ըստ վիրգիկայ, նիրհեալ կոյժակունք զարթուցա-նել, և առ ժամն մութ և ծածկեալ ոսկերեր բարեաց նշոյքը հետզէտէ աւելի պայծառ տեսնել:

Ուր որ աշուրնիս դարձնենք ընդ չորս կողմանս աշխարհի, այս կերպ ջա-նից և բնութեան արգելից դէմ մնաքառման մէջ կը տեսնենք զազգս և ժողո-վուրդս, որնք նաև շատ անգամ բարույն բուռն նախանձով եթէ ոչ և այլ ողուով, զսասակաք ճօնումներ ու խոտորումներ ալ կը կրեն իրենց ընթացից մէջ, ուղ-ղութեան հին՝ մանաւանդ թէ անհնանալի ճամբէն շեղելով. ինչպէս նաև կը տեսնենք և զայլս բազմագոյնս որ իրենց առժամանակեայ և կամ դարական խո-տորումներէն տակաւ կը գառնան առ ուղղութիւն: Ակնարկ մը տանք մեծ ամեծ ազդաց ներքին և արտաքին կացութեանցը, կրիցն ու կենսական շարժմանցը. ակնարկ մը տանք նաև Արևելից դրանց մէջ տաւաղեալ քանի մը ժողովրդոց օ-րինաւոր եռանգն ու յառաջադիմութիւնը ուշիւ դիտելու, և թերեւս շատ իսկ բա-ւական են ըսածնուռ ճշմարտութեանը, Աւելին ընթերցողաց կը թողունք մի առ մի նկատել և խորամուխ ըլլալ ըստ կարելոյն 'ի վիճակ ամենայն մեծ և փոքր ազդաց և ժողովրդոց, յորոց ամենէն աւելի փոքրաթիւքն անդամ ջանացող են մեծագունից և յառաջացելոց օրինակին հետամուռ ըլլալու:

Մեր հին և նոր աստուածարեալ հարքն ալ և մեծահոգի ամիրայքն ու սե-պուհք, ըստ մասին նաև ժողովրդականք ումանք՝ շատ իսկ մեղ դիւրեցին և հար-թեցին ազգային բարոյական մետաղխուզութեան և հնախուզութեան ասպարէ-զը, այնպիսի աւանդներով և անմահական յիշատակներով ու օրինակիներով, որ մի միայն խայծ ու հրապուրանք կ'ըլլան մեր սրտիցը, և աշխարհիս համայնա-սփիւռ կողմերէն կը ձգեն ու կը կեդրոնացնեն զմեղ հոգուով 'ի մի սէր և 'ի կե-դրոն բարույ հասարակաց: Ահաւասիկ ժամանակ է ուրեմն և դէպ ժամանակ որ անոնց պակասը լրացնենք, ինչպէս որ լրացնելու ճգանց հետ ենք, այլ և այլ իրաց նկատմամբ իրենց փափաքանաց արդիւնապէս կատարումն տալով, որուն համար զոհեցին ումանք բովանդակ հանգիստնին, ինչուան նաև կեանքերնին, յաւելով նոր և աղէկ կշռադատեալ ձեռնարկութիւններ որք բարեբեր ըլլան յապագայս: Սակայն, կը կրկնենք դարձեալ, նոյն իմաստուն՝ որ է ըսել խո-հեմ և աշալուրջ դործունէութեամբ, չմոռնալով միշտ մեծանուն քաղաքագիտի մը առածը, թէ ի վեր քան զամենայն մի՛ կարի նախանձայուզուրիւն<sup>1</sup>: Անոր համար՝ բաւական չէ որ և ից յառաջացեալ աղգաց՝ զսրս իրրե գերագոյն օրի-նակներ պէտք է համարինք, միսյն բարոյական զարգացմունքը աեսնել կամ լսել՝ կոյր զկուրայն հետևող ըլլալու համար, այլ իրրե 'ի դաստիարակութեան

↑ Surtout pas trop de zèle. (Tall.) .

պատահնեաց և 'ի շափ հասելոց, պէտք է նաև իմանալի ստուերն ալ զգուշեաւ հեռատեսել, բարւոյն և ծշմարիտ գեղեցկին ըյօթ աւելի հաճոյական ընելու համար. յուղընել կ'ըսեմ կամ տեսնել ազդաց իրեւ մէկ զանդուած ունեցած նշանաւոր տկարութիւնքն ու զեղծմունքը, ինչ ինչ վնասակար սկզբունքն ու ոգին, որպէս զի խորչինք անոնցմէ, գիտնալով որ ամենայն ինչ 'ի նոռա մեղի համար կամ յարմար չէ: Այս ալ աւելցընենք հարևանցի որ այս կէտերը գիտելու ենք գլխաւորապէս մեր մերձաւոր վերաբերութեանց մէջ ըստ տեղեաց և անձանց, մենք մանաւանդ՝ որ գրեթէ ամենայն ազդաց մէջ ցրուեալ կ'ապրինք, ինչպէս ոչ ինչ ընդհատ նաև անոնց գրականութեամբ սահծ ժամանակնիս:

Այս ընտրողութեան պակասութենէն է որ մեր մէջ կը տեսնենք յախուռն նկրառումն օտար ազդաց նմանողընթեան: Օրինակ իմն . ո՞լ չգիտեր Գաղղիոյ գրլիաւորապէս քանի մը զրչաց փիլ. վարդապետութեանց և այլ և այլ գրութեանց՝ հանդերձ իրենց առաջին կարգի զարմանալի տաղանդովը, իրենց հայրենեաց բարոյապէս և նիւթապէս հասուցած վնասը: Այս ասանկ ըլլալով մեծաւ ցաւով և զարմացմամբ է տեսնելը ժամանակի մը հետեւ ազդերնուս բազմամիւ երիտասարդաց առ այսպիսիս միտումը. ևս առաւել երբ հոգեւորական իսկ միայնարանէ մը 'ի գովեստ այնպիսեաց մէկուն գրութիւններ գուրս կը հրատարակուին, և նորին, թէպէտե ինչպէս ըսկինք, ամենաքաջ զրչի՝ այլ ոչ ողջամիտ տաղանդի, փիլիսոփայութեան զանազան նախադասութիւնքն իրեւ վկայութիւնք ինչ ինչ ապացութեանց բերուած կը կարդացուին: Նմանապէս զարմանաց և ցաւի նիւթ է տեսնել նոր հրատարակեալ շատ գիտնական և շատ ազգասէր չանդէս մ'ալ որ զանգեալ է այս ոգւով, ըստ նմանութեան Գաղղիոյ և Գերմանիոյ քանի մը բարձր և յառաջադաս հանդիսից: Եւ այս անընտրողութեան հետ և անոր հետեանք՝ ներուի մեզի ըսել, եթէ կապակցեալ կը տեսնենք սկզբնաւորութիւն մը տեղ պահանջովական և պարծենկոտ, կամ մեր նախընթաց բացատրութեամբն ըսելով, չափազանց նախանձայուղութեան, խառն ընդ անոն երգիծաբանութեան, արհամարհելով այլոց զդուշաւոր սկզբունքն՝ որ է հիմն աւղիդ գաստիարակութեան, մինչեւ համարելու չափ թէ այս ինչ՝ կամ այն ինչ գիտութիւնն և գիտնականի գրութիւնքը կարող չեն գիտնալ անանկ անձինք՝ որ բոլոր կեանքերնին, ոչ վաղանցուկ պարբերական լրագրութեան, այլ ծանր ուսմանց նուիրած են. և որ մեծն է տոհմային և բազմարդիւն անձանց նուիրական անունն ու պատիւն անպատճառ թշնամանել անդէպ ձեռնարկութեամբ: Այս չափազանց նախանձայուղութեան արդասիք կ'ըլլայ միանդամայն՝ անէակ ընդդիմաբաններ ծնուցանել մոտք մեղի, կամ մեր չափազանց ըմբռոնած ճշմարտութեանց գէմ, գրեթէ իրեւ զծիծաղելին Տոն Գիշոր՝ զաղօրիս 'ի հեռուստ իրեւ ասպետներ երևակայելով և անոնց գէմ գրչի սրով չահատակելով, և առանց հիմնական պատճառարանութեանց՝ մեծ մեծ դատաստաններ վճռել. գաւառաւական առանձին լեզու մը ըստ իւկը ձեւակերպեալ այլ և բազում իւկը մեր բուն հայրենի լեզուին կերպարանքը չունող, մանաւանդ թէ շատ տեղ մայր գրաբառի հակառակ ընթացող՝ իրեւ հայկական գրականութեան բացարձակ լեզու պահանջել որ ըլլայ, աւելորդ և մեռեալ համարելով բացէ 'ի բաց գրաբառը և Փոքր Ասիոյ ամենայն կերպ աշխարհաբառը աղաւաղ խառնուրդ մը: Եւ ահա այս

նկատմամբ երկու խօսքով համառօտենք այս տեղ մեր կարծիքը, զոր երկարօրէն ալ պատմական տեսութեամբ և շատ ապացուցութեամբք կը նայինք հաւաստել, եթէ զրութիւնիս ներէք:

Ցանկալի է որ աւելի միտք զնէին այս խնդրոյն միջամուխ քննագատք թէ մեր զրաբառն՝ իրրե զլատիներէնն և իրրե զին յունարէնն անմահական լեզու մ'է իր ունեցած ճոխութեամբն ու կորովսը, վսեմ ու ճկոն ձրիքը, և ամեն կերպ զրութեանց յարմար, միայն քէ՞ի գրիչ ձարտար դիպիցի, ըստ վկայութեան նորոյ բաղրատունուոյն : ինչպէս որ յայտնի կ'երեկ մեր հին մատենազրութեան, և մանաւանդ ուկեղարու զանազան գրչաց վրայ, իրրե ընափի և օրինակագիր լեզու զրականութեան . որ և նոյն իսկ ճիշդ գիտութեանց և աներկղիմի բացատրութեանց ճահաւոր է՝ եթէ ուզուի, ըստ ամենայնի գրեթէ նման լատիներէնի, որով կը խօսուի իսկ գեռ, կ'ուսուցուի և կը մատենազրուի շատ զանազան կողմեր և բարձր ուստամարաններու և ժողովներու մէջ մեծաւ յարգութեամբ և օգտիւ, (ինչպէս նաև կերպերս ՚ի Գետըրբուրդ յարեւլադիտական ուսումնաժողովին) : իսկ աշխարհաբարուի նկատմամբ կը կարծենք թէ հիմակուանեղած կերպ կերպ գաւառականներէն մին զլիսաւորապէս՝ որ մեզ կ'երեկի ցան կաստանի գրչաց մէջն ումանց գործածանն՝ ըստ բաւականի մաքրեալն, գեռաւելի զտուելով և աւելի պատուաստուելով գրաբառի կանոնաւորութեանց վրայ, պիտի ըլլայ ոչ շատ հեռու ժամանակաւ գիւրահասկանալի և դիւրաւ գրելի սովորական ազգային լեզու, առանց ուստամական զլիսաւոր գաւառականին իրեն եղականութիւնը բոլորովին կորսնցնելու . որ է ըսել՝ թէ մեր խոփարմունքէն և ծանրաբեռնեալ ու կը լցուածուր ռամկերէններէն պիտի գառնապնկ դեռ նոյն իսկ երկու գար առաջ գործածաւած օրինաւոր և մաքուր աշխարհաք բառին, որ նոյն ատենուան զանազան գրութեանց և մանաւանդ մեր Միք . Արքահօր տպած Քրիստոնէական վարդապետութեան մէջ յայտնապէս կը տեսնուի, ինչպէս որ ինքն ալ գեղեցիկ կերպով յաւաշաբանին մէջ կը զեկուցանէ, ինչ ինչ միայն անշուշտ աւելի վերածելով հին կանոնական ոճոյ : Որով և զրաբառը, դարձեալ կ'ըսենք, անկարելի է որ մեռնի, ոչ միայն աշխարհաբարուի մայր և զայեակ ըլլալուն համար, — յորմէ նախ պէսք է մանանի ոչ սսակ գրագէտն, այլ և ամենայն ճիւղի ուսման պարապող ազգայինն, անոր արմաններովը, կանոնաւոր ած անցներովն ու բարդութիւններով զանազան ուսմանց գաղափարները բացատրելու համար, ուր և որչափ որ կը ներէ լեզունիս և ինչպէս որ բնական խելքը կ'առաջնորդէ, որպէս զի յախուռն եւրոպական բառերով շխճովներ մեր զրութիւնները, մինչդեռ մեր լեզուին մէջ անոնց մէկ բաւական մասին համապատասխանող բառերն անպական են, — այլ և զինքը կենդանացնող մեզի ժամանակակից այնպիսի զրիխներուն պատճառաւ՝ որք մեծապէս սիրոցուցին զինքն ու փառքը պայծառացուցին, յայտնելով անոր անբաւ գեղեցկութիւննը, և կարծես թէ իրենց գրչաց տակ քանի մը ուրիշ չքնաղ գոյներով ալ աւելի ևս գեղեցկացուցին, և միով բանիւ կրկին ևս հաւաստեցին մեր մեծ գանձն ու պարծանքն ըլլալը, վեհ հանճարներու և անոնց գերազոյն զդացմանցն ու մոտածութեանցը հետ զմեղ կապողը, ազգութեան միակ զրոշմն աւ նուիրական աւանդը և անձկատուող սրտից սփոփանկն ու շարժիչը, մեր առ երբեմն փառաւոր և եր-

բեմն աղէկէզ անցեալն, և առ նախնիս թռուցանելով զմեզ և անոնց հետ կերպով մը կենսակից ընելով։

Խօսքերնիս երկընցաւ իրքեւ վիրաբուժական դրչաւ մեր քանի մը վէրքերը շօշափել ու օծանել ուղած ժամանակնիս, որով աւելի թերես տիրութեան պատճառ եղանք մեր ընթերցողաց՝ որոնց սիրտն արդէն իսկ զգացեալ ու մորմն քեալ է մօտ օրերուս մէջ լուռած ահաւոր և ողորմուկ արկածիք հրկիզմանց, աւարառութեանց, բռնաբարութեանց և սպանութեանց Սակայն եթէ տիրառիթ են ասոնք՝ բայց միանդամայն միմիթարական պիտի ըլլայ մտածեն որ 1876 տարւոյ ընթացիցը մէջ հանրական և կուտակաւոր արդիւնք ալ տեսնուեցան ու ամրարեցան ըստ զանազան տեսակին ինչպէս կանխաւ ըսինք՝ Աղգութիւննիս ցուցուց յայտնապէս իր կենդանութիւնը, և Արևելից նորափայլ և վայելյա կազմ ձուլման ժամանակ իրեն պատիւ ընող զգացմամբք պատշաճ և հանգիստ դիրք մունենալ ջանաց յանդամակցութեան ջսմաննեան պետութեան ըստ զանազան զլիսոց իր արժանաւորութիւնն ու մարդկային իրաւունքն յայտնի ընելով, ընդդէմ աստ անդ զինքը հարստահարող աւարառուաց, Դաստիարակութեան նկատմամբ նշանաւոր պարբերականք զանազան առթիւ՝ եռանդեամբ խօսեցան, և որ ինչ պէտք է մեզի ներկայապէս՝ ջանացին աւելի ևս բացատրել. և անպակաս տեսնուեցաւ, անշոշտ ուրիշ տարիներէ աւելի, խնամք և սէր կարգաւորութեան վարժարանաց, ջանք աստիճանաւոր կրթութեան և բարձրագոյն ուսմանց ընթացիք լրումն տալու ուսումնական վարժոցի. անոր համար՝ ոչ միայն աղդաբրնակ ամեն քաղաքաց մէջ, այլ նաև Եւրոպայի քանի մը համբաւաւոր կողմերն աշակերտներ աւելցան անձկանք ուսանելու և քաջավարժ ըլլալու յարումստաս, և մեր հին թարգմանչաց և երանաշնորհ Մին. Արբահօր նման օտարաց գովելի զարգացմունքը յանձինս վերաբերելու ։ Գրազիտական ասպարէզն ալ ըստ բաւականի պայծառ փայլեցաւ զանազան յարգի գրուածիք թէ ըստ հնագիտականին և թէ ըստ գեղեցիկ և բարոյական դպրութեանց մասին։ Լսուեցան այլ և այլ տեղեր զիշերային ուսումնական համախմբութիւններ, և ազգային թատրոննական սէրն ալ ըստ ներելոյ պարագայից ժամանակին, դարձեալ բաւական արծարծ տեսնուեցաւ. ՚ի Հնդկաբնակ ազգայինն նոյնպէս վառերեցաւ սէր հայկաբանութեան զանազան լեզուաբանական հարցմամբք ։ Վերջապէս տեսնուեցաւ թէ ամեն կողմ փութածան և ճարտարզրիչ բանասէրներ և անձնանուէր գործողներ չեն պակսիր մեզի, և ամենէն աննշան անկիւնն իսկ ինքնին քանի մը էական կայծեր բռնկած երեսուց։

Բորբաքներ հրատաւորենք արեմն զայնս՝ ազատ պահելով միշտ յամենայն սպառող և շինուցանող միջորահողմ տարածայնութեանց, և մէկ խարոյկ ձևացընելով մեր ամենուն սրտից կրակը՝ նուիրենք զայն ոչ Անահայ, երբեմն անձնաւորեալ պաշտպանին ամենայն կերպ բարեբերութեանց Հայաստանի, այլ մայրենի ոգւցոյ ազգութեանս և հոգւցոյ անմահութեան նախկին և արդի երախտաւորաց յաւէքրժայիշատակն Հայութեան, անոնց պաշտպանողական քաղցր ու դորովակից հովանեաց ներքէ սկըսելով և աւարաելով յաջողութեամբ ներկայ 1877 տարիս։

Հ. Դ. Ն.